ARMENIAN VIRTUAL COLLEGE AGBU AVC ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION
Армянский Колледж
ЗАНЯТИЯ
● индивидуальные
● групповые
● дневные
● вечерние
8 938 157 47 87
пр. Стачки, 25,

Частные уроки армянского языка
тел. 8 904 509 68 76

## Нам 1 год!



20 сентября 2015 г. в армянской воскресной школе г. Новочеркасска начался новый учебный год. Школа открыта для всех, кто хочет изучать родной язык и интересуется культурой Армении!!! В этом году есть в школе и нововведения. Кроме армянского языка, появились предметы по литературе и истории Армении. И все это совершенно бесплатно!

Ждем всех желающих.

**Основатель Вардан МИНАСЯН**

# Виртуальный колледж наводит мосты

16 сентября состоялась встреча директора Высшей школы бизнеса ЮФУ, к.э.н. А. Архипова и исполнительного директора РРОО «Нахичеванская–на–Дону армянская община», к.и.н. С. Саядова. Темой встречи стали современные мультимедийные технологии в сфере дистанционного образования, так как армянская община одна из партнеров Армянского виртуального колледжа, который предоставляет возможность получить образование независимо от страны проживания.

За последние три года в АВК прошли обучение более 3500 студентов из 65 стран: от США до России, от Северной Африки до Венесуэлы, от Аргентины до тропического острова Реюньон Индийского океана. В колледже можно учиться дистанционно, а также по гибридной программе, которая представляет собой сочетание традиционных и онлайн методов образования. Кроме того, в колледже также можно пройти обучение по программе подготовки преподавателей в области педагогических и технических аспектов электронного обучения. Класс армянского языка АВК уже несколько лет работает в РРОО «Нахичеванская–на–Дону армянская община».

Последнее новшество АВК – ТВ школа, которая выходит в эфир армянского общественного телеканала по спутниковому вещанию, в том числе и на русском языке. С целью обеспечения большей гибкости для студентов ТВ программа транслируется в сочетании с онлайн–курсами. О времени трансляции ТВ школы Армянского языка можно узнать на сайте колледжа www.avc–agbu.org.

При АВК открыта библиотека мультимедийных электронных книг. Электронные книги оживляют содержание через рисунки и видео. У читателей есть возможность оценить себя с помощью самостоятельных тестов, пользоваться словарем, специально разработанным для данной электронной книги.

В каком бы уголке мира не находились студенты АВК, они могут принять участие в виртуальных турах, в число которых входят виртуальные посещения музеев Армении, культурные мероприятия, связанные с армянскими национальными праздниками и традициями, виртуальные прогулки по улицам Еревана и так далее.

Стороны договорились организовать презентацию колледжа для студентов Высшей школы бизнеса ЮФУ. Встречу А. Архипова и С. Саядова организовал полномочный представитель ректора ЮФУ по взаимодействию с партнерами в Республике Армения к.п.н. С. Аванесян.

Армине ВАРДАНЯН

Օրերի հետ

# ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԵՐԱԶԱՆՔ



Այս տարվա ամառն ինձ համար դարձավ կատարյալ մի հիանալի ժամանակ, երբ վերջապես, իրականացավ իմ ամենաբաղձալի երազանքը՝ կարոտով, սիրով, հույսով, հավատով լի, որ տարեցտարի աճում էր, հըսկայանում և երբեմն էլ թվում էր, թե երբեք չի կատարվելու: Սակայն հըրաշք կատարվեց: Քսաներկու տարի անցնելուց հետո, Հայրենիքիս, մոտիկ հարազատներիս անհուն սերն ու կարոտն ստիպեցին ինձ խիզախել և ինքնաթիռով թռիչք կատարել դեպի Հայաստան, Մայր հայրենիք:



Այդ բանում ինձ օգնություն ցուցաբերեց մեր հայկական «Դոնի Նախիջևանի» համայնքը: Երախտագիտությամբ հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը համայնքի ղեկավարությանը:

Եվ ահա ես իմ կարոտած Հայաստանում եմ՝ իմ ծննդավայրում, մանկության վառ օրրանում, Երևանում՝ իմ երիտասարդական, ուսանողական գեղեցիկ, անկրկնելի վայրերում: Եվ միայն ես ինքս գիտեմ, թե ինչպիսի հուզմունքներ, ապրումներ ու վերապրումներ ունեցա այդ օրերում:

Մեր հին ու նոր Երևանը գեղեցկացել է, դարձել ավելի չքնաղ ու գեռող: Հյուսիսային պողոտան, Պանթեոնում՝ Կոմիտասի թանգարանը, Ծիծեռնակաբերդում՝ Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին նվիրված թանգարանը, Եռաբլուրը, Կասկադը, «ԹՈՒՄՈ» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը, Գրիգոր Լուսավորչի եկեղեցին, որոնց մասին գիտեի, բայց չէի տեսել, իրենց տեսքով ու ճարտարապետական ժամանակակից բնորոշ հատկանիշներով լիովին գրավեցին, արտակարգ տպավորություն թողեցին: Բարեփոխվել, բարելավվել է նաև իմ ծննդավայր Արտաշատը, որտեղ կառուցվել է բավականին գեղեցիկ մի եկեղեցի՝ սուրբ Հովհաննես անունով, որը դարձել է արտաշատցիների ամենասիրելի տեսարժան վայրերից մեկը: Իսկ Արտաշատի լճում վխտում են բազմաքանակ իշխան և այլ տեսակի ձկներ՝ հաճույք պատճառելով և՛ երեխաներին, և՛ մեծահասակ զբոսնողներին:

Սփյուռքի ուսուցիչների վերապատրաստման դասընթացների ժամանակ, որոնք սկսվեցին հուլիսի 14-ից Երևանի պետհամալսարանի պատմության ֆակուլտետի դահլիճում, 105 ժամվա ընթացքում, մեր հարգարժան, մեծապատիվ դասախոսների շնորհիվ մենք շատ բան իմացանք ու սովորեցինք, իմացածներս էլ ընդարձակեցինք ու ամրապնդեցինք:



«Հայոց լեզվի, գրականության դասավանդման հիմնախնդիրները», «Մայրենիի ուսուցման առանձնահատկությունները սփյուռքի դըպրոցներում», «Հոգեբանության հիմնահարցեր», «Մանկավարժության հիմնահարցեր», «Արվեստի և մշակույթի կրթադաստիարակչական ներուժը» թեմաներով դասախոսություններն անցնում էին ջերմ մըթնոլորտում և՛ արևելահայերեն, և՛ արևմտահայերեն ուսուցիչների համար: Մեզ համար, հատկապես, շատ անհրաժեշտ հանդիսացավ՝ հայերենի արագացված ուսուցման մեթոդիկայի դասավանդումը:

Ազգային երգ ու պարի պարապմունքներն անցնում էին ԵՊՀ և՛ մշակույթի կենտրոնում, և՛ բանասիրական ֆակուլտետի դահլիճում, ուր հնչում էին հայկական ավանդական, խրոխտ, հաճելի, քաղցրահնչուն երգ ու պարի մեղեդիները, ուժ ու եռանդ պարգևելով 15 օրով սովորող սփյուռքահայ «ուսանողներին»:

Բացի այս բոլորից, ՀՀ Սփյուռքի նախարարության «ՍՓՅՈՒՌՔ» ամառային դպրոցի ծրագրով, որը Համահայկական բազմաթիվ ծրագրերից մեկն է և այս տարի նվիրված էր Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին, կրթօջախների հայոց լեզվի ուսուցիչների, կրթական գործի կազմակերպիչների վերապատրաստման դասընթացներին մասնակցողների համար անց էին կացվում ծանոթություններ Հայաստանի ուսումնական հաստատությունների ծառայությունների հետ, հանդիպումներ, այցելություններ, էքսկուրսիաներ, հանրահայտ հրատարակչությունների կողմից սփյուռքին տրամադրվող գրքերի շնորհանդեսներ: Կարելի է պատմել երկար և մանրամասնորեն, բայց դա ժամանակի հարց է, որը միշտ չի բավարարում:

Դասընթացներն ավարտվեցին օգոստոսի մեկին և մենք՝ սփյուռքահայ ուսուցիչներս, հրաժեշտ տալով միմյանց և մեր հայապահպանության կարևորագույն խընդիրներով զբաղվող ջանասեր, հայրենասեր հայրենակիցներին, անմոռանալի տպավորություններով, լիցքավորած, կրկին գնացինք՝ ցրվեցինք աշխարհով մեկ՝ այնտեղ, ուր հայ կա և հայի շունչ, ուր հայ մանուկներ են ծնվում: Այո, ծնվում, մեծանում են մանուկները մեր, ապրում են օտարերկրներում, խոսում, շփվում, հաղորդակցվում են ուրիշ լեզուներով, և ով, Տեր Աստված, ինչքան ջանք ու եռանդ, սեր և հոգատարություն է պետք մեր սփյուռքահայ հայոց լեզվի և գրականության ուսուցիչներին, որպեսզի նրանք կարողանան իրագործել իրենց հայրենանվեր նպատակը՝ օտար երկրում, այլազգի միջավայրում՝ հային հայ պահել մայրենի լեզվի ուսուցման միջոցով: Ուստի, ես նրանց բոլորին, նոր ուսումնական տարվա սկզբին, ցանկանում եմ առողջություն և նորանոր հաջողություններ Մայրենիի դասավանդման, նրա ջատագովման ու պահպանման անհրաժեշտ, մեծ գործում:

Իմ խորին, մեծագույն երախտագիտությունն ու շնորհակալությունը, լավագույն ցանկություններն եմ հայտնում Հայաստանի այն բոլոր ղեկավար օրգաններին, որոնք ըզբաղվում են հայապահպանության այս կարևորագույն, հիանալի գործով:

**ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԵՐԱԶԱՆՔ**

Հայաստան եկա՝ կարոտս առնելու,
Հայաստան եկա՝ սերս հայտնելու,
Հայաստան եկա՝ խորապես հուզվելու,
նոր ապրումներով՝ ապրելու համար:
Հայաստան եկա՝ թախիծս մարելու,
Հայաստան եկա՝ թարմ օդ շնչելու,
Հայաստան եկա՝ թևավորվելու,
բնության գրկում ճախրելու համար:
Հայաստան եկա՝ հուսավառվելու,
Հայաստան եկա՝ նոր երգ երգելու,
Հայաստան եկա՝ կյանքի նոր ուժով՝
լիցքավորվելու, ապրելու համար…
Հայաստան եկա՝ շատ երջանկացա,
նոր գիտելիքներ, նոր թափ ու եռանդ
ստանալով ես հանց՝ ջահելացա:
Հայաստան եկա և ուրախությամբ
նվիրական իմ երազանքն ասես՝
դարձավ պատմություն, իրականացավ:
Եվ դա կատարվեց միայն ձեր շնորհիվ
մեր հայրենասեր ու հայապահպան՝
Հայասեր որդիք, տիկնայք ժրաջան:
Բայց, ցավոք, պիտի ետ վերադառնամ
ճակատագրի խաղերով հանդերձ՝
սփյուռք՝ Ռուսաստան ես պիտի գնամ
Ու այնտեղ թախծեմ, կրկին կարոտեմ
Հայաստան աշխարհ՝ Մայր Հայրենիքիս,
Որ ծնել է ինձ, սնել, մեծացրել ու
հոգուս համար անմար կարոտի օջախ է դարձել:
Եվ այդ կարոտով, մեծ սիրով լցված,
Հայ մանուկների կրթությամբ տարված
պիտ շարունակեմ նրանց ուսուցանել՝
Մայրենի լեզվով ասել ու խոսել,
կարդալ ու գրել, երգել, մտածել,
ու սովորեցնել՝ Մայրենին սիրել, պահել,
պահպանել՝ Մայր Հայաստանի մասին երազել…

Շողիկ Սիմավոնյան